



ՅՈՒԼԻՍ, JULY 10, 2016

ԵՐԿՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ
Ճաշու ընթերցումներ
Ես. Բ. 16-4 Ա. Կորնթ. Ա. 25-30 Մատթ. ԺԸ. 10-14

SECOND SUNDAY OF TRANSFIGURATION
Synaxis readings
Is 3:16-4:1 1 Cor 1:25-30 Mt. 18:10-14



Չէ՞ք գիտեր թե դուք Աստուծոյ տաճարն էք, եւ Աստուծոյ Հոգին կը բնակի ձեր մէջ: Եթէ մէկը ապականէ Աստուծոյ տաճարը, Աստուած ալ պիտի քանդէ զի՛նք. որովհետեւ Աստուծոյ տաճարը սուրբ է, եւ դո՛ւք էք այդ տաճարը: (Ա. Կորնթ. Գ:16-17)

'Don't you know that you yourselves are God's temple and that God's Spirit dwells in your midst? If anyone destroys God's temple, God will destroy that person; for God's temple is sacred, and you together are that temple. (1 Cor 3:16-17)



Թաղէն առաքեալը եւ Ս. Սանդուխտ կոյսը Հայ Եկեղեցոյ ամենանշանաւոր տօնելի սուրբերէն եւ անոնց անունը սետօրէն կապուած է հայոց աշխարհի լուսաւորութեան պատմութեան հետ: Քրիստոսի Համբարձումէն յետոյ, Տէրոջը պատգամին համաձայն թէ «Ուրեմն գացէ՛ք, աշակերտեցէ՛ք բոլոր ազգերը, մկրտեցէ՛ք զանոնք Հօր, Որդիին եւ Սուրբ Հոգիին անունով:» (Մատթ. 28:19), Ս. Թաղէնսը նախ կուգայ Եղեւսիա: Հոս կ'աւետարանէ կենաց խօսքը եւ ի թիւս բազում հրաշքներու՝ կը բժշկէ նաեւ Աբգար թագաւորը: Ապա, իրեն փոխարինող մը նշանակելով Եղեւսիոյ մէջ, կուգայ Հայոց Սանատրուկ արքայի տիրոջները: Հոս իր քարոզներով բազմաթիւ հեթանոսներ կը բերէ քրիստոնէական հաւատքի, հիմը դնելով Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցոյ: Գալով Արտազ գաւառը՝ առաքեալը դարձի կը բերէ արքայադուստր Սանդուխտ կոյսը:

Տեղեկանալով իր դստեր քրիստոնէայ ըլլալուն՝ հայոց Սանատրուկ արքան նախ կը յորդորէ անոր ետ դառնալ նախկին հեթանոս հաւատին, սակայն ապարդիւն: Զայրացած արքան թէ Թաղէնս առաքեալը եւ թէ Սանդուխտ կոյսը կը նետէ բանտ եւ կ'ենթարկէ տանջանքներու: Արքունի իշխանագուն կառավարչի միջոցաւ արքայադուստրը համոզելու վերջին փորձն ալ ապարդիւն կ'ըլլայ: Աւելին, կառավարիչը ինքն ալ քրիստոնէայ կը դառնայ: Ի վերջոյ, արքայի հրամանով Ս. Թաղէնս առաքեալը եւ Ս. Սանդուխտ կոյսը կը նահատակուին արքայական ամարանոց Շաւարշաւան գիւղաքաղաքին մէջ:

Սուրբ Թաղէնս առաքեալը Ընդհանրական Եկեղեցոյ սուրբ է: Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին Ս. Թաղէնս առաքեալը կը կը յիշատակէ՝

- 12 առաքելներու հետ՝ Յիշատակութիւն Մբ. 12 Առաքելներուն եւ Պօղոսի 13-րդ Առաքելին
- Ս. Սանդուխտ կոյսին հետ՝ Յիշատակութեան Սուրբ Թաղէնս Առաքելի եւ Սանդուխտ Կոյսի
- Ս. Բարդողիմէնս առաքելին հետ՝ Յիշատակութիւն Թաղէնս եւ Բարդողիմէնս Առաքելներու

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ - REQUIEM SERVICE

Եւս առաւել յիշեա Տէր զհոգին.....

Սեդրակ Արթին Մաճարեանի
Տոբթ. Հենրիկ Յովհաննիսեանի
Հայրապետ Յովհաննիսեանի
Սրբուհի Յովհաննիսեանի
Աստղիկ Յովհաննիսեանի
Անտրէյ Գազանճեան
Միրանոյշ Տանաճեանի
Ճանէթ Չոլաքեանի
Կարապետ եւ Արուսեակ
Ալթունեաններու
Արաքսի Ալթունեանի
Գոհար Տամպուրաճեանի
Խաչիկ Քիրտեանի
Եպրաքսէ Գիրիշճեանի
Արաքսի Գիրիշճեանի
Սուրատ եւ Սուլթանիկ
Մանուկեաններու
Այտա Մանուկեանի
Ժիրայր Գունտազճեանի
Ինչպէս նաեւ համայն Ալթունեան,
Սալեան, Քիրտեան, Գիրիշճեան,
Մանուկեան, Հինդլեան եւ
Գունտազճեան ընտանիքներու
հանգուցեալներու հոգիներուն
ի հանգիստ:
Վահէ Շահմուրատեանի
Սուլթան եւ Վարդանուշ
Շահմուրատեաններու
Տաւուտի Գերդաստանի
ննջեցեալներու հոգիներու
ի հանգիստ
Թոնի Փանոսեանի
Արթօ եւ Մարինէ Սարլի
Սարգիս եւ Նուրիցա Գարագուլոզի
Յովսէփ Չիլինկիրեանի
Յաւարտ Ս. Պատարագի սուրճի եւ անուշեղէնի հիւրասիրութիւն՝
ողբացեալներ **Սեդրակ Արթին Մաճարեանի, Տոբթ. Հենրիկ Յովհաննիսեանի եւ Արթօ Սարլի** յիշատակին՝ իրենց հարազատներու կողմէ:
Following the Divine Liturgy coffee & cookies will be served in memory of late
Setrak Artin Madjnian, Dr. Henrik Hovhannisian & Arto Sari by their loved ones.

Setrak Artin Maranjian
Dr. Henrik Hovhannisian
Hayrabet Hovhannisian
Surpuhi Honhannisian
Astghik hovhannisian
Andrei Kazanjian
Siranoush Danaciyan
Jannet Colakyan
Garabet and Arousiag Altounian
Araxie Altounian
Kohar Dambouradjian
Khatchig Kurdian
Yébraksé Kirishjian
Araxie Kirishjian
Mourad and Soultanig Manoogian
Ayda Manoogian
Jirayr Koundakjian and the repose
of the souls of the departed members
of the Altounian, Salian, Kurdian,
Kirishjian, Manoogian, Hintlian
and Koundakjian families.
Vahe Shahmouradian
Sultan & Vardanoush
Shahmouradian and the repose
of the souls of the departed
members of the Davoodi Family
Tony Panossian
Arto & Marine Sari
Sarkis & Nouritza Karakoulouk
Hovsep Tchilingirian

Ս. Սեդրակի ծաղիկներու եւ թերթիկի նուիրատու՝
Աննիկ Աւանէսեան եւ Ընտանիք
Խորանի Ծաղիկները՝
"Flowers of the World" Ծաղկաւոյ

The Altar Flowers and the Sunday Bulletin are sponsored by
Annik Avanessian & Family
Altar Flowers by
"Flowers of the World"

ALTAR FLOWERS



If you wish to sponsor the altar flowers in memory of your loved ones or in honour of a special occasion, please contact the church office at 416-431-3001 or register your name & contact information on the calendar located at church lobby.

Reminder: HTAC Parish Council would like to thank all members for your continuous financial and moral support. This is to encourage HTAC's existing members to consider paying the Annual Membership Dues for the year 2016 (\$60 for adults and \$30 for students 18 years and older) at their earliest convenience.
New Members: Interested in becoming a dues paying member of Holy Trinity Armenian Church? Please approach a Parish Council member on Sundays or contact the church office between Monday-Saturday for information (416)431-3001.



CHURCH EVENTS

- July 4-29 Summer Language Training Program for adults and children**
Monday- Friday ESL 9:00am-11:30am and Western Armenian 11:30-2:30pm, at Don Valley Junior High School
For more information call 416-431-3001 or 416-839-0566
- August 14 The Feast of Assumption of St. Mary**
Following the Divine Liturgy Outdoor Blessing of Grapes Service and Family Barbeque
**If you wish to donate grapes, please call Church Office before Friday, August 12, 2016.*

COMMEMORATION OF THE APOSTLE THADDEUS AND THE VIRGIN SANDOUKHT - July 9, 2016

St. Thaddeus the Apostle and St. Sandoukht the Virgin are two of the most venerated saints in the Armenian Church. The “Great Conversion” of the Armenian nation to Christianity is connected to their names. Following the Ascension of Christ, according to the Lord’s message: “Therefore go and make disciples of all nations, baptizing them in the name of the Father and of the Son and of the Holy Spirit,...”, Thaddeus departs for Edessa. There he preaches the Gospel, and among his numerous miracles, he heals the king Abgar. In the year 44 A.D., Thaddeus travels to Armenia and enters the domain of the pagan King Sanatrouk. After preaching in various parts of Armenia, St. Thaddeus converts many to Christianity, who become the foundation of the Armenian Apostolic Church.



While in the region of Artaz, the Apostle Thaddeus also converts Princess Sandoukht to Christianity. Her father, the Armenian King Sanatrouk becomes aware of his daughter’s conversion and pressures her to return to her native pagan religion, but his efforts were vain. The enraged king imprisons both the Virgin Sandoukht and St. Thaddeus and subjects them to severe torments. Another effort is made to persuade the Virgin to give up Christianity by an Armenian noble. This effort result is the noble converting to Christianity himself. Finally, the king orders the death of his own daughter, Sandoukht and the Apostle Thaddeus. They were martyred in Shavarshan, the summer residence of the royal family. Virgin Sandoukht became the first Christian martyr and the first saint of Armenia.

Both the apostle’s and the first saint’s relics were discovered by means of a divine vision near the field of Shavarshan by a monk named Giragos, at some time in the 4th or early 5th century.

The Armenian Apostolic church honors St. Thaddeus along with:

- 12 apostles-Commemoration of Christ's 12 apostles and thirteenth apostle - St. Paul
- St. Bartholomew - Commemoration of St. Taddeus and St. Bartholomew
- St. Sandoukht - Commemoration of the apostle Thaddeus and the Virgin Sandoukht



ԳԻՏԵԼԻ ԹԷ՞ ...

Ամեն տարի Ս. Թադէոս առաքեալի և Ս. Սանդուխտ կոյսի յիշատակութեան օրուայ առիթով 3-օրեայ (Հինգշաբթիէն Շաբաթ) ուխտագնացութիւն կը կազմակերպուի դէպի Ատրպատականի թեմի Ս. Թադէոս վանքը (Իրան):

1954 թուականէն ի վեր պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի Արտազ գաւառի ուղղութեամբ ուխտի կ'երթան հազարաւոր ուխտաւորներ, Իրանի երեք թեմերէն՝ Ատրպատականի, Թեհրանի եւ Սպահանի, ինչպէս նաեւ Հայաստանէն եւ արտասահմանէն՝ մաս կազմելու ուխտագնացութեան հանդիսութիւններուն:

Ուրբաթ երեկոյեան կը կատարուի նախատօնակ, ապա վանքի շրջափակէն ներս խարուկահանդէսի ընթացքին. ուխտի եկած հայորդիք, հայերէն երգերով ու պարերով կ'ողողեն մթնոլորտը՝ պատրաստուելով միւս օրուան մեծ տօնին:

Շաբաթ օրը ուխտաւորները կը մասնակցին տօնի առիթով մատուցուող Ս. Պատարագին, որմէ ետք կը կատարուի աւանդական ջրօրհնէքը եւ օրհնուած ջուրը կը բաժնուի հաւատացեալներուն:

DID YOU KNOW?

Every year on the occasion of the Feast of St. Thaddeus the Apostle and St. Sandukht Virgin a 3-day long pilgrimage (Thursday -Saturday) is organized to St. Thaddeus Monastery (Iran) of Prelacy of Aderbadagan. Since 1954 thousands of pilgrims from Iran, Armenia and around the world go to the Vaspourakan province of historical Armenia to be part of this amazing experience. During these three days the pilgrims take part in religious ceremonies as well as create a unique atmosphere filled with Armenian songs and dances. On Saturday, hundreds of pilgrims take part in Divine Liturgy and Water blessing ceremony.